

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԻԳՐԱՆ ԹՈՓԱԼՅԱՆ ԴԻԱՆԱ ԹՈՓԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԸՆԴԱՄՅՆՄԱՆ ԵՎ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Ինչպես հայտնի է, ՀՀ տնտեսությունում 1994 թվականից սկսած արձանագրվել է անընդհատ աճ, որի միջին իրական ցուցանիշը կազմել է 6,7%: Միաժամանակ, 1994-2002թ. արձանագրվել է ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի հարաբերակցության աճ, բյուջեի դեֆիցիտի համանման ցուցանիշի նվազեցման պայմաններում:

2001-2002 թվականներին մախորդ տարիների համեմատությամբ բյուջեի եկամուտները համապատասխանաբար աճել են 12.5 % և 16.9 %-ով, իսկ ծախսերը 9.6 % և 7.2 %-ով

Աղյուսակ 1

(մլն. դրամ)

	Տարիներ								
	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002
ԱՆՎ. ՀՆԱ	187.1	522.3	661.2	804.3	955.4	987.4	1033.3	1175.5	1357.3
ԱՆՎ. ՀՆԱ-ի %-ային արտահայ- տությամբ		179.2	26.6	21.6	18.8	3.3	4.6	11.8	15.5

1997-2001 թվականներին կառավարության պարտքը շարունակում է աճել: Մասնավորապես առավելագույն աճ է գրանցվել 1999 թվականին, որը կազմել է 13.6 %: Սակայն կառավարության պարտքի աճը 2000-2001 թվականներին, չի հանդիսացել առաջանցիկ ՀՆԱ-ի աճի նկատմամբ: Մասնավորապես, նշված ժամանակահատվածում, մախորդ տարվա նկատմամբ կառավարության

պարտքը աճել է 2 %-ով և 8.1 %-ով, իսկ նույն ժամանակահատվածում ՀՆԱ-ն աճել է համապատասխանաբար՝ 3.7 % և 10.5 %-ով:

Ի թիվս հիշյալի, 1997-2001 թվականներին պարտքի կառավարման համակարգում արձանագրվել են նաև պարտքի արդյունավետ տոկոսադրույքի նվազման միտումներ 6.7 %-ից մինչև 3.4 % (համապատասխան ժամանակահատվածների համար կազմելով 6.7 %, 5.7 %, 5.2 %, 3.5 % և 3.4%):

Համաձայն համաշխարհային պրակտիկայում ընդունված սահմանային ցուցանիշների ՀՀ ներկայումս համարվում է արտաքին պարտքի գնահատման պարտքի միջին բեռ ունեցող երկիր:

Ներդրումների կառուցվածքը հիմնական կապիտալում ըստ ֆինանսավորման աղբյուրների ունեցել է հետևյալ պատկերը՝ ի հաշիվ պետական բյուջեի 9%, կազմակերպությունների միջոցները 31%, անհատների միջոցներ (ֆիզիկական անձանց) 34%:

Պետական ներդրումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել է ճյուղային հատուկ միջնաժամկետ ներդրումային ծրագրեր, ինչպիսիք են «Աղետի գոտու վերականգնման ծրագիր»-ը, 1999 թ. վերջում հաստատված «Սեփականաշնորհման միջոցների (ՍՄ) օգտագործման ծրագիր»-ը և այլն:

Ինչպես ներկայացված է աղյուսակ 2-ում 1998-2001թթ. Հայաստանում բյուջետային ներդրումները (ԲՆ) կազմել են ՀՆԱ մոտավորապես 3.5-5%-ը, որը եթե համեմատենք տարածաշրջանային և միջազգային չափանիշների հետ, բավականաչափ բարձր ցուցանիշ է: Նույն ժամանակաշրջանում պետական ներդրումները (ՊՆ) կազմել են ՀՆԱ 5-6%-ը:

Ի դեպ այդ ցուցանիշը Ռուսաստանում կազմում է ՀՆԱ մոտավորապես 4%-ը, իսկ տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) երկրներում 3-5%-ը:

Պետական ներդրումների ֆինանսավորման հիմնական աղբյուրները և ֆինանսավորման ծավալները 1998-2001թթ. (մլն. դրամ)

Աղյուսակ 2

Ցուցանիշներ	Տարիներ			
	1998	1999	2000	2001

Ընդամենը պետական ներդրումներ	60950	50768	50768	73092
ՀՆԱ նկատմամբ, տոկոս	5.68	6.17	4.92	6.22
Այդ թվում՝ բյուջետային ներդրումներ (ԲՆ)	46766	47005	39660	41158
Ոչ բյուջե, այդ թվում	7455	13945	11108	31934
Արտաբյուջետային միջոցներ	1500	1500	2250	7712
Արտաքին դրամաշնորհներ	4031	7209	5461	13108
Այլ ծրագրեր աղետի գոտում	1269	3787	2259	9864
ՀՀ կենտրոնական բանկի ներդրումներ	655	1449	1138	1250
Բյուջետային ներդրումներ, ՀՆԱ նկատմամբ տոկոս	4.89	4.76	3.85	3.50

Չնայած համապատասխան աղյուսակի տվյալների նկատելի է ԲՆ-ի նվազում 1998-2001թթ., ՊՆ ընդհանուր ծավալը նույն ժամանակահատվածում ունեցել է աճի միտում, ինչը նշանակում է, որ բյուջետային ներդրումների կրճատումը հիմնականում փոխարինվել է պետական այլ աղբյուրների հաշվին ֆինանսավորման աճով (օրինակ՝ Լիմսի հիմնադրամի միջոցների օգտագործման ավելացմամբ և այլն):

ԲՆ-ի իրականացվել է տարեկան բյուջեներում նախատեսված միջոցների հատկացումների միջոցով՝ ներառյալ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի և սեփականաշնորհման միջոցների հաշվին կատարված ֆինանսավորումը, ինչպես նաև բազմակողմանի ու երկկողմանի դոնորների կողմից հատկացված միջոցները: Այս առումով, պետական բյուջեի կապիտալ ծախսերի ընդգրկման շրջանակը էականորեն ընդլայնվել է 1998 թվականից սկսած, երբ դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մեծ մասը (ներառյալ ներդրումային ծրագրերը) համախմբվել են պետական բյուջեում: Համախմբման գործընթացը դեռևս կատարելագործվում և բարելավվում է արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի ընթացիկ և կապիտալ ծախսերը տարանջատելու և դասակարգելու առումով:

Ներդրումային ծրագրերի մեծ մասի ֆինանսավորումը շարունակում է իրականացվել արտաքին աղբյուրների հաշվին: Չնայած, որ 1998-2001թթ. ընկած ժամանակահատվածում ֆինանսական աղբյուրների կառուցվածքում

տեղի են ունեցել հսկայական վայրիվերումներ, 2001թ. այնուամենայնիվ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորվել է կապիտալ ծախսերի մոտավորապես 67 տոկոսը:

Ներդրումային ծախսերի համար բյուջետային հատկացումները գրեթե ամբողջապես ուղղվել են հիմնական այնպիսի ֆիզիկական և սոցիալական ենթակառուցվածքների կապիտալ ծախսերի և հիմնանորոգման ֆինանսավորմանը, ինչպիսիք են՝ ճանապարհների վերականգնումը, էներգահամակարգի համար հիմնական միջոցների ձեռքբերումն ու վերանորոգումը, համայնքների ջրամատակարարման համակարգերի վերանորոգումն ու նոր ջրագծերի կառուցումը, ոռոգման համակարգի վերականգնումը դպրոցների, պետական հիվանդանոցների և բնակելի տների կառուցումն ու վերանորոգումը:

ՊՆԾ-ի ֆինանսավորման առումով՝ Հայաստանի հիմնական դոնորներ են հանդիսանում այնպիսի միջազգային ֆինանսական կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Զարգացման միջազգային ընկերակցությունը (ԶՍԸ (IDA)), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (ԳԶՄՀ (IFAD)), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ (EBRD)), ինչպես նաև Ռուսաստանի, Գերմանիայի (KfW) և Ֆրանսիայի կառավարությունները:

Ներդրումային ծրագրերի ճյուղային կառուցվածքից երևում է, որ չնայած ԲՆ ծավալների կրճատմանը, գյուղատնտեսությունը շարունակում է մնալ բյուջետային միջոցների հիմնական շահառուն: 2001թ. այս ճյուղում կատարված ներդրումները կազմել են ԲՆ 27.5 %-ը, որը կազմում է ՀՆԱ-ի մոտավորապես 1%-ը: Հիմնական ներդրումները նպատակաուղղված են եղել ոռոգման ցանցերի վերականգնմանը, պատվարների վերանորոգմանն ու վերականգնմանը, գյուղատնտեսական հողերի վիճակի բարելավմանը: Ներդրումները հիմնականում ֆինանսավորվել են դոնորների կողմից: ԶՍԸ-ի և ԳԶՄՀ-ի կողմից իրականացված ոռոգման համակարգերի վերականգնման, պատվարների անվտանգության, անշարժ գույքի գրանցման և գյուղատնտեսության զարգացման ծրագրերի ֆինանսավորումը կազմել է ճյուղում իրականացվող ներդրումային հատկացումների 96%-ը: Ներքին միջոցները ուղղվել են վերը նշված ծրագրերի համաֆինանսավորմանը և հողերի բարելավման աշխատանքների ֆինանսավորմանը:

Ի հաշիվ կրթության և առողջապահության բնագավառներում ներդրումային ծրագրերի ֆինանսավորման ծավալների ավելացման, ԲՆ-ի կառուցվածքում էականորեն ավելացել են սոցիալական ենթակառուցվածքներում կատարվող ներդրումների ծավալները: 2001թ. իրականացված բյուջետային կապիտալ ծախսերի գրեթե 16 %-ը կատարվել է այս ոլորտում: Սա տեղի է ունեցել ՁՄԸ-ի կողմից կրթության և առողջապահության բնագավառներում իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված միջոցների օգտագործման աճի պայմաններում (ոլորտում կատարված ներդրումների 69%-ը) և բյուջետային հատկացումների որոշակի ավելացման արդյունքում ներդրումները հիմնականում կատարվել են աղետի գոտում:

Էներգետիկայի բնագավառում ներդրումների տեսակարար կշիռը վերջին տարիներին ենթարկվել է էական փոփոխությունների պայմանավորված դոմորների կողմից ֆինանսավորվող ծրագրերով և դրանց համար բյուջեում նախատեսված ֆինանսական միջոցների օգտագործումներով: Սա նույնպես այն ճյուղերից է, ուր կապիտալ ներդրումները գրեթե ամբողջությամբ ֆինանսավորվում են արտաքին միջոցների հաշվին: Բարձրավոլտ լարման կայանների և փոխանցման համակարգերի վերակառուցման, ՅԷԿ-երում անհետաձգելի վերականգնողական միջոցառումների ֆինանսավորման համար ՁՄԸ-ի, KfW-ի և ՎԶԵԲ-ի կողմից հատկացումները կազմել են 2001 թվականին էներգետիկայի բնագավառում կատարված կապիտալ ծախսերի գրեթե 97%-ը:

Տրանսպորտի բնագավառում ներդրումները կազմել են ԲՆ-ի ընդհանուր ծավալի շուրջ 15 %-ը: Ոլորտում հիմնական ներդրումները կատարվել են ճանապարհների վերականգնման և վերանորոգման, Երևանի մետրոպոլիտենի ջրհեռացման համակարգի և Դավիթաշենի կամուրջի շինարարության համար: Չնայած այն հանգամանքին, որ Լինսի հիմնադրամի կողմից ճանապարհների կապիտալ վերանորոգման ուղղությամբ իրականացվող հատկացումները չեն արտացոլվել պետական բյուջեում, դրանք շեշտակիորեն բարելավել են ճյուղում պետական ներդրումների ցուցանիշները: 2001 թվականից սկսած՝ այս աղբյուրից լրացուցիչ ֆինանսավորումը կազմել է 38 մլրդ. դրամ:

ԲՆ միտումների վերլուծությունը նկատելի է դարձնում հետևյալ հիմնական իրողությունները.

. ԲՆ ընդհանուր մակարդակը Հայաստանում թերևս բավարար է, հատկապես եթե այն դիտարկենք ընդհանուր պետական ծախսերի ներկա համատեքստում,

. ԲՆ-ի արդյունավետության հետագա բարձրացման բավական հնարավորություններ կան: Բազմաթիվ ճյուղերում տարբեր ծրագրերի հետաձուլու լինելու փոխարեն, ջանքերը պետք է ավելի նպատակաուղղել մի քանի առաջնահերթ ճյուղերում ակտիվների պահպանմանը:

Առաջիկա տարիներին պետական ներդրումների բաշխման համար մեր կարծիքով պետք է կարևորել՝

. միջնակարգ կրթության և առողջապահության բնագավառում ֆինանսական ենթակառուցվածքների պահպանումը, համայնքային խմելու և ոռոգման խմելու ջրերի որակի բարելավումը և մատչելիության ապահովումը, ճանապարհների պահպանությունը Կառավարության կողմից դիտարկվում են գերակա ոլորտներ միջնաժամկետ հեռանկարում,

. այդ ոլորտում պետական ներդրումների հետաձգումը գործնականում անհնար է պատկերացնել, քանի որ չնայած Հարունակվող վերակառուցման և ռացիոնալացման ծրագրերին, վերոհիշյալ ճյուղերը դեռ երկար ժամանակ գրավիչ չեն լինի մասնավոր ներդրումների համար,

. առանց վերոհիշյալ պետական ներդրումների համար հատկացումների Հարունակման, անհնար կլինի հասնել սպասարկումների որակի ծրագրված մակարդակի ապահովմանը:

2001թ. օտարերկրյա ներդրումներ հիմնականում կատարվել են արդյունաբերական (15865.4 մլն. դրամ) և կապի (37068.7 մլն. դրամ) կազմակերպություններում, իսկ տրանսպորտային կազմակերպություններում դրանք բավականին փոքր են՝ 0.6 մլն. դրամ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում արդյունաբերական կազմակերպություններում օտարերկրյա ներդրումների 49.95%-ը կազմել են ուղղակի ներդրումները, 50.05%-ը՝ այլ ներդրումները, իսկ պորտֆելային ներդրումներ չեն իրականացվել: Կապի կազմակերպություններում գերակշռում են այլ ներդրումները (71.8%), ուղղակի ներդրումները կազմել են (22.7%), իսկ պորտֆելային ներդրումները՝ (0.1%):

Ի դեպ պորտֆելային ներդրումների ցածր տեսակարար կշիռը կամ բացակայությունը պայմանավորված է արժեթղթերի շուկայի զարգացման անբավարար մակարդակով:

Երկարաժամկետ հեռանկարում, առկա հզորությունների օգտագործման արդյունավետության բարելավման հնարավորությունների սպառման պայմաններում, նոր հզորությունների ստեղծման համար ներդրումները պետք է ավելի կարևոր դեր խաղան տնտեսական աճի ապահովման գործում: Սա կպահանջի ներքին և արտաքին ներդրողների վստահության ամրապնդում և տնտեսության ֆինանսական հատվածի առավել արդյունավետ մասնակցություն խնայողությունները ներդրումների վերածելու խնդրում: Այնուամենայնիվ, կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում տնտեսական բարձր աճ ակնկալվում է առկա հզորությունների առավել արդյունավետ օգտագործման արդյունքում: Այսպիսով, ակնկալվում է 2003-2005 թթ. ԲՆ-ը պահպանել ՀՆԱ 4-4.5%-ի սահմաններում, մի փոքր ավելի բարձր, քան ներկա մակարդակը՝ հիմնական նպատակ ունենալով բարելավել միջոցների օգտագործման արդյունավետությունը և ռազմավարական բաշխումը: 2003-2005թթ. ընդհանուր ԲՆ-ը կկազմեն 196.2 մլրդ. դրամ՝ արձանագրելով գրեթե 53% անվանական աճ 1999-2001թթ. փաստացի արդյունքի համեմատ:

2003-2005 թթ. ՊՆԾ-ով նախատեսվող հատկացումները (մլն. դրամ)

Աղյուսակ 3

Ցուցանիշներ	2003	2004	2005
Ընդամենը ՊՆԾ	53120.2	70053.0	73074.7
ՀՆԱ %	3.65	4.37	4.12
Արտաքին աղբյուրներ	35623.4	50450.7	47356.1
ՊՆԾ %	67.1	72.0	64.8
Ներքին աղբյուրներ	17496.7	19602.3	25718.7
ՊՆԾ %	32.9	28.0	35.2

Ինչպես երևում է ներկայացված աղյուսակից, 2005թ. ներքին ֆինանսավորման տեսակարար կշիռը կաճի՝ կազմելով բյուջեի ընդհանուր կապիտալ ծախսերի գրեթե 35.2 %:

Առկա միջոցների վերաբերյալ ծրագրային հատկացումները կատարվել են մակրոկանխատեսումների բազային տարբերակի հիման վրա: Ինչպես մակրոտնտեսական քաղաքականության և կանխատեսումների բաժնում է նշվել, միջնաժամկետ մակրոկանխատեսումների լավատեսական տարբերակը ենթադրում է պետական բյուջեի դեֆիցիտի 3.5 % մակարդակ ՀՆԱ-ի նկատմամբ, ինչը բազային տարբերակով առաջարկվող մակարդակը գերազանցում է շուրջ 1 տոկոսային կետով: Դեֆիցիտի առաջարկվող աճը նախատեսվում է 80:20 համամասնությամբ ուղղել ստորև ներկայացվող գերակա ճյուղերում պետական ներդրումային ծրագրերի իրականացմանը և, համապատասխանաբար, բյուջետային հատվածում աշխատավարձերի լրացուցիչ բարձրացմանը: 2003-2005 թթ. ՊՆ ճյուղային կառուցվածքը (մլն. դրամ)

Աղյուսակ 4

Ընդամենը ԲՆ, այդ թվում՝	2003	2004	2005
Տրանսպորտ	8085.4	6066.9	2196.0
Գյուղատնտեսություն/Ռոռզում	5871.6	10215.9	3790.7
Կրթություն	2103.3	4924.6	9092.8
Առողջապահություն	982.7	2537.7	2977.4
Համայնքային ծառայություններ*	8104.6	7038.5	12214.8
Այլ	27972.6	39269.3	40803.1

* Ջրամատակարարում, ջրահեռացում

Նկատելի է, որ ֆիզիկական ենթակառուցվածքների՝ տրանսպորտի, ջրամատակարարման, ջրահեռացման և ռոռզման բնագավառներում առաջարկվող ներդրումային ծրագրերի համար հատկացումները նորից զգալիորեն գերազանցում են այդ ոլորտների համար Պետական ծախսերի ուսումնասիրության նախագծում առաջարկվող ծավալները:

2003-2005թթ. սոցիալական ենթակառուցվածքների բնագավառում ՊՆԾ-ում հիմնական ուղղվածություններ կրթության և առողջապահության ոլորտներում հիմնական միջոցների փլուզման կանխարգելումն է, այսինքն՝ դպրոցների, հիվանդանոցների և այլ կարևոր ենթակառուցվածքների շենքերի վերանորոգման և ամրացման աշխատանքները:

Կառավարությունը կտրուկ կավելացնի շենքերի վերանորոգման և արդիականացման, կրթական գործընթացի կազմակերպման համար անհրա-

ժեշտ հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով հատկացվող միջոցների ծավալները: Առողջապահության բնագավառում կշարունակվի գյուղական ամբուլատորիաների պահպանման ծախսերի ֆինանսավորումը և կապիտալ ներդրումները կուղղվեն մարզային պոլիկլինիկաների ու հիվանդանոցների կարիքներին:

Ներդրումների և, հատկապես՝ օտարերկրյա ներդրումների հոսքի արագացման համար չափազանց կարևոր նշանակություն կունենա արդարացի կամ համահավասար հարկման արմատավորումը և առանձին հարկ վճարողների նկատմամբ խտրական կամ հովանավորչական վարչարարության բացառումը:

Հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների ուղղությամբ իրականացվող քաղաքականությունները, մասնավորապես՝ հարկային և մաքսային վերահսկողության ավտոմատ համակարգերի ներդրումը, խոշոր հարկատուների հաշվառման նպատակով առանձնացված ստորաբաժանման ստեղծումը, կարևոր միջոցառումներ են հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացման ճանապարհին:

Սակայն, հարկման հարաբերություններին դեռևս բնորոշ է «հարկահավաքման» գործելակերպը, ինչը չափազանց վտանգավոր երևույթ է: Հարկ վճարողները շատ դեպքերում կորցնում են «զգոնությունը» հարկային քաղաքականության նկատմամբ: Նման գործելակերպի վերացումը պետք է դառնա իրականացվող քաղաքականության հիմնական խնդիր և բարելավի հարկային մարմինների ծառայությունների որակը:

Հարկ վճարողների կողմից հարկերի վճարման «կառավարելիության» բարձրացումը պետք է դառնա վարվող քաղաքականության նպատակը:

Մյուս կողմից, վարչարարական ռիսկեր կան մոր ընդունված՝ տնտեսական գոտիների օրենսդրության պահանջների նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացման դաշտում:

Այս օրենսդրության ընդունումը կողմնորոշված է ներդրումների ավելացման և տնտեսական ակտիվության բարձրացման հաշվին բնակչության եկամուտների ավելացմանը:

Միաժամանակ, համաշխարհային փորձը վկայում է, որ ազատ գոտիների առկայությունը պահանջում է չափազանց հետևողական մաքսային և հարկային վարչարարություն, որոնց բացակայությունը կարող է կանգնեցնել պետական եկամուտների կորստի ռիսկերի առաջ:

Հաշվի առնելով թվարկված հարցերի կարևորությունը՝ անհրաժեշտ կլինի ձեռնարկել հարկային քաղաքականության և, հատկապես՝ հարկային վարչարարության ներկա գործելակերպի մանրամասն ու համակողմանի վերլուծություն և կատարված եզրակացություններին օգտագործել այս ոլորտում բարեփոխումների արագացման համար:

Հաշվի առնելով, որ հանրապետության արտաքին պարտքի զուտ ներկա արժեքն արդեն գերազանցել է 500 մլն. ԱՄՆ դոլարի սահմանագիծը՝ դիտաժամկետ հատվածում մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից, մեր կարծիքով, նպատակահարմար չի կարող համարվել պարտքի բեռի զգալի ծանրացումը: Կառավարությունը, մեր կարծիքով, պետք է վարի դեֆիցիտ/ՉՆԱ հարաբերության աստիճանական իջեցման քաղաքականություն: Արտաքին ֆինանսավորում ներգրավելիս առանցքային ուղղություն պետք է լինի արտաքին պետական պարտքի աճի տեմպերի կրճատումը և ստացվող վարկերի պարտքերի վերակազմավորումը՝ նախապատվությունն արտոնյալներին տալու մասով:

Մեր կարծիքով ՀՀ արտաքին պարտքի գծով հիմնական նպատակը, մոտակա տարիներին պետք է հանդիսանա հանրապետության ճանաչումը որպես ցածր պարտավորվածության երկիր, իսկ ներքին պարտքի կառավարման գլխավոր նպատակը, պետք է լինի պարտքի ժամկետի երկարաձգումն ու էժանացումը:

Նշված միտումները պահպանելու դեպքում հնարավոր կլինի թեթևացնել պարտքի բեռը, ինչը նախադրյալներ կստեղծի երկարաժամկետ հատվածում մակրոտնտեսական կայունություն ապահովելու համար:

Միաժամանակ, արտաքին պարտքի կառուցվածքի բարելավման նպատակով, արդեն իսկ տրամադրված վարկերը՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման և ապրանքային առաքումների ճանապարհով սպասարկումը (2003 թվականին Թուրքմենստանի և Ռուսաստանի Դաշնության

տրամադրված վարկեր) դիտվում է ոչ միայն վարկի մարում, այլ ներդրում Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ: Արդյունքում, եթե գրանցված միտումների ներքո (պարտքի բեռի թեթևացման) հնարավոր լինի նաև պարտքերը սպասարկել ապրանքային կամ գույքային իրավունքների փոխանցման ճանապարհով, ապա երկարաժամկետ հատվածում հնարավոր կլինի ավելի արագ թեթևացնել պարտքերի (հարաբերական) բեռը և հասնել ցանկալի մակարդակի:

Որպես ներդրումային միջավայրի բնութագրող գործոններ առաջին հերթին պետք է դիտարկել արտադրանքի նկատմամբ առկա պահանջարկը, առևտրային վարկերի տոկոսադրույքը, ներդրումային ծրագրերի իրականացման համար բանկային վարկերի ստացման գործող մեխանիզմը, ներդրումային ռիսկերը, երկրում տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ներդրումային գործընթացները կարգավորող գործող իրավական նորմատիվային դաշտը, հաղորդակցման առկա ցանցերը և այլն:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2002թ.:

2. Tacis

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
Ջեկույց - իրական ակտիվներում իրականացված ներդրումների ընտրանքային հետազոտություն:

3. ՀՀ 2003-2005թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր: